

## ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

07.11.2014թ. նիստին

### *Մասնակցում էին՝*

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Վ.Դավթյանը, Յու. Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը.

### *Հրավիրված էին՝*

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Սարտիրոսովան,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ա.Դաշյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Դ. Անանյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի շինարարության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Բ. Ջուլիակյանը:

### *Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.*

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2001-2013 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանագերծված տվյալների բազաները ԵՊՀ մասնագիտական վերապատրաստման բաժնի վարիչ, ծրագրի ղեկավար Վաչե Քալաշյանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Սարտիրոսովա/

**Որոշեցին՝**

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ ԵՊՀ մասնագիտական վերապատրաստման բաժնի վարիչ, ծրագրի ղեկավար Վաչե Քալաշյանին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2001-2013 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2013 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազան Համաշխարհային բանկի սոցիալական պաշտպանության և աշխատանքի բաժնի տնտեսագետ Մաթեո Մորգանդիին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

**Որոշեցին՝**

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Համաշխարհային բանկի սոցիալական պաշտպանության և աշխատանքի բաժնի տնտեսագետ Մաթեո Մորգանդիին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2013 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

3. «2015 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա /

#### **Որոշեցին՝**

Հաստատել 2015 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը՝ համաձայն հավելվածի:

/Անհատական/

4. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2009 թվականին տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության և Ասիական զարգացման բանկի RETA 6 430 ծրագրի շրջանակներում իրականացված ոչ ֆորմալ զբաղվածության և ոչ ֆորմալ հատվածի հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազան Պակիստանի Լահորի կառավարման գիտությունների համալսարանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան /

#### **Որոշեցին՝**

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնին՝ Պակիստանի Լահորի կառավարման գիտությունների համալսարանին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2009 թվականին տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության և Ասիական զարգացման բանկի RETA 6 430 ծրագրի շրջանակներում իրականացված Ոչ ֆորմալ զբաղվածության և ոչ ֆորմալ հատվածի հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազան գուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

5. «2014 թվականի երրորդ եռամսյակում ՀՀ ԱՎԾ որակի կառավարման աշխատանքային խմբի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Վ. Արևշարյան /

#### **Որոշեցին՝**

Ընդունել ի գիտություն «2014 թվականի երրորդ եռամսյակում ՀՀ ԱՎԾ որակի կառավարման աշխատանքային խմբի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը»:

/Անհատական/

6. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2014 թվականի սեպտեմբերի 22-ից 26-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպած «Մարդահամարների ու կացարանների համատարած հաշվառման» փորձագետների խմբի աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ.Գևորգյան/

7. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2014 թվականի հոկտեմբերի 15-ից 17-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի /ՄԱԿ-ի ԵՏՀ, UNECE/ վիճակագրության բաժնի կողմից կազմակերպված «Մարդկային ռեսուրսների կառավարում և վերապատրաստում /ՄՌԿՎ/» խորագրով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա. Հայրապետյան/

8. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2014 թվականի հոկտեմբերի 21-ից 22-ը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպած «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ֆինանսների վիճակագրության ցուցանիշների հավաքագրման, մշակման և տարածման մեթատվյալների համակարգի մշակում» թեմայով միջազգային սեմինար-խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Հ.Տիտիզյան/

9. Հաղորդում՝ Մոլդովայի Քիշնև քաղաքում 2014 թվականի հոկտեմբերի 13-ից 17-ը Եվրամիության վիճակագրական ծառայության կողմից կազմակերպված «Կառուցվածքային բիզնես վիճակագրություն» թեմայով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ա.Դաշյան, Դ. Անանյան, Բ. Ջուլիակյան/

**07.11.2014թ. նիստին**

***Մասնակցում էին՝***

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Յու.Պողոսյանը, Վ.Դավթյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը.

***Հրավիրված էին՝***

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի ընտրանքի և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Մ. Խաչատրյանը,

ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսական համատարած հաշվառման պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ Գ. Նշանյանը:

***Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.***

1. «Հետգյուղատնտեսական հաշվառման որակի ստուգման հարցաթերթի, տնտեսությունների ցուցակի, ուղեկցող թերթի և ՀՀ գյուղատնտեսական համատարած հաշվառման արդյունքների որակի գնահատման հետգյուղատնտեսական հաշվառման կարգի նախագծերը հաստատելու մասին» հարցը:

*/Ձեկուցողներ՝ Ա.Ավագյան, Գ.Նշանյան/*

**Որոշեցին՝**

Հաստատել «Հետգյուղատնտեսական հաշվառման որակի ստուգման հարցաթերթը, տնտեսությունների ցուցակը, ուղեկցող թերթը և ՀՀ գյուղատնտեսական համատարած հաշվառման արդյունքների որակի գնահատման հետգյուղատնտեսական հաշվառման կարգը» համաձայն իրենց հավելվածների:

*/Անհատական /*

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2013 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանագերծված տվյալների բազան Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*

**Որոշեցին՝**

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2013 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

*/Անհատական/*

3. «Գրադարանների գործունեության մասին» Ձև 6-ԳՄ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 19-ի թիվ 193-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին » հարցը:

*/Զեկուցող՝ Ն.Բաղդասարյան/*

**Որոշեցին՝**

Հաստատել՝ «Գրադարանների գործունեության մասին» Ձև 6-ԳՄ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը համաձայն հավելված 1 և 2-ի և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 19-ի «Հաշվետվություն գրադարանների գործունեության մասին» Ձև թիվ 6-զմ պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 193-Ն որոշումը:

*/Նորմատիվ /*

4. Հաղորդում՝ Բելգիայի Թագավորության Բրյուսել քաղաքում 2014 թվականի նոյեմբերի 5-ին «ՀՀ-ԵՄ առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով ենթակոմիտեի հերթական՝ 13-րդ նիստին» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա.Սաֆյան/

5. Հաղորդում՝ Լեհաստանի Վարշավա քաղաքում 2014 թվականի հոկտեմբերի 14-ից 17-ը Լեհաստանի կենտրոնական վիճակագրական գրասենյակի կողմից կազմակերպված «Վարշական ռեգիստրների օգտագործումը վիճակագրական տվյալների ստացման համար» ուսումնական դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ն. Բաղդասարյան, Մ. Խաչատրյան /

6. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2014 թվականի նոյեմբերի 2-ից 7-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի /ԵՏՀ/ Շրջակա միջավայրի քաղաքականության կոմիտեի և Եվրոպական Վիճակագիրների Կոնֆերանսի հրավերով «Բնապահպանական վիճակագրական տեղեկատվության որակի հարցերին նվիրված սեմինարին» և «Վիճակագիրների և բնապահպանների միասնական աշխատանքի նպատակային խմբի 9-րդ նստաշրջանի՝ Բնապահպանական մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խմբի 15-րդ նստաշրջանի աշխատանքներին» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Յու.Պողոսյան/

**02.12.2014թ. նիստին**

***Մասնակցում էին՝***

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Յու.Պողոսյանը, Վ.Դավթյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը.

***Հրավիրված էին՝***

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,

ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա.Ավագյանը,

ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսական համատարած հաշվառման տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման բաժնի պետի տեղակալ Ա.Ամրոյանը:

***Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.***

1. «ՄԱԿ-ի Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքները և Եվրոպական Վիճակագրության Փորձառության օրենսգրքի սկզբունքները Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունում կիրառելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Սաֆյան/*

***Որոշեցին՝***

1. Առաջնորդվել բացառապես ՄԱԿ-ի Վիճակագրական Հանձնաժողովի կողմից 1994թ. հաստատված և 2013թ. վերահաստատված Պաշտոնական Վիճակագրության Հիմնարար Սկզբունքներով և դրանց վրա խարսխված Վիճակագրական ծրագրային կոմիտեի կողմից 2005թ. փետրվարի 24-ին հաստատված և Եվրոպական Վիճակագրական Համակարգի Կոմիտեի կողմից 2011թ. սեպտեմբերի 28-ին վերահաստատված Եվրոպական Վիճակագրության Փորձառության Օրենսգրքի սկզբունքներով և այդ սկզբունքները կիրառել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության գործունեությունում.

2. Տեղեկացնել Հայաստանի Հանրապետությունում վիճակագրական գործունեությամբ զբաղվող բոլոր հաստատություններին (պետական մարմիններին, այդ թվում՝ ՀՀ Կենտրոնական բանկին), որ Պաշտոնական Վիճակագրության Հիմնարար Սկզբունքները և Եվրոպական Վիճակագրության Փորձառության Օրենսգրքի սկզբունքները հանդիսանում են պաշտոնական վիճակագրությունում պարտադիր պահանջ:

*/Անհատական /*



2. «Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական Վիճակագրության Փորձառության օրենսգրքի իրականացման թեթև փորձագիտական գնահատման հիման վրա մշակված բարելավման գործողությունների ցանկը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Սաֆյան/

#### **Որոշեցին՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի իրականացման թեթև փորձագիտական գնահատման հիման վրա մշակված բարելավման գործողությունների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին՝ ապահովել բարելավման գործողությունների իրականացումը՝ ըստ ժամանակացույցի:

/Անհատական/

3. «2008 թվականի դեկտեմբերի 24-ի «Բերքահավաքի, կերերի կուտակման, աշնանացանի և ցրտահերկի բարձրացման ընթացքի մասին» Ձև թիվ 29-ԳՏՀ (ամսական) թիվ 21-Ն, 2012 թվականի օգոստոսի 17-ի «Բերքահավաքի, կերերի կուտակման, աշնանացանի և ցրտահերկի բարձրացման ընթացքի մասին» Ձև 29-ԳՏ (ամսական) թիվ 28-Ն, 2008 թվականի դեկտեմբերի 24-ի «Գարնանացանի ընթացքի մասին» Ձև թիվ 3-ԳՏՀ թիվ 15-Ն, 2002 թվականի օգոստոսի 9-ի «Հաշվետվություն գարնանացանի ընթացքի մասին» Ձև N 3-գտ տարին 3 անգամ թիվ 120-Ն, 2002 թվականի օգոստոսի 9-ի «Գյուղատնտեսական մթերքի իրացումը 20 թ.» թիվ 3 տարեկան թիվ 128-Ն, որոշումներն ուժը կորցրած ճանաչելու և «Գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքը և աշնանացանի ընթացքը» Ձև թիվ 29-ԳՏՀ (ամսական), «Գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքը և աշնանացանի ընթացքը» Ձև թիվ 29-ԳՏ (ամսական), «Գարնանացանի ընթացքը» Ձև թիվ 3-ԳՏՀ, «Գարնանացանի ընթացքը» Ձև թիվ 3-ԳՏ, «Գյուղատնտեսական մթերքի իրացումը 20 թ.» թիվ 3 (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը և լրացման հրահանգները հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Ավագյան/

#### **Որոշեցին՝**

Ուժը կորցրած ճանաչել «2008 թվականի դեկտեմբերի 24-ի «Բերքահավաքի, կերերի կուտակման, աշնանացանի և ցրտահերկի բարձրացման ընթացքի մասին» Ձև թիվ 29-ԳՏՀ (ամսական) թիվ 21-Ն, 2012 թվականի օգոստոսի 17-ի «Բերքահավաքի, կերերի կուտակման, աշնանացանի և ցրտահերկի բարձրացման ընթացքի մասին» Ձև 29-ԳՏ (ամսական) թիվ 28-Ն, 2008 թվականի դեկտեմբերի 24-ի «Գարնանացանի ընթացքի մասին» Ձև թիվ 3-ԳՏՀ թիվ 15-Ն, 2002 թվականի օգոստոսի 9-ի «Հաշվետվություն գարնանացանի ընթացքի մասին» Ձև N 3-գտ տարին 3 անգամ թիվ 120-Ն, 2002 թվականի օգոստոսի 9-ի «Գյուղատնտեսական մթերքի իրացումը 20 թ.» թիվ 3 տարեկան թիվ 128-Ն, որոշումներն և հաստատել «Գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքը և աշնանացանի ընթացքը» Ձև թիվ 29-ԳՏՀ (ամսական), «Գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքը և աշնանացանի ընթացքը» Ձև թիվ 29-

ՉՏ (ամսական), «Գարնանացանի ընթացքը» Ձև թիվ 3-ԳՏՀ, «Գարնանացանի ընթացքը» Ձև թիվ 3-ԳՏ, «Գյուղատնտեսական մթերքի իրացումը 20 թ.» թիվ 3 (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը և լրացման հրահանգները:

/Նորմատիվ, Անհատական/

**3.** Հաղորդում՝ Լյուքսեմբուրգի Դքսության Լյուքսեմբուրգ քաղաքում 2014 թվականի հոկտեմբերի 14-ից 15-ը Եվրոստատի կողմից կազմակերպված «Բնակչության վիճակագրություն» թեմայով աշխատանքային խմբի համդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա.Ամրոյան/

**4.** Հաղորդում՝ Լյուքսեմբուրգի Դքսության Լյուքսեմբուրգ քաղաքում 2014 թվականի նոյեմբերի 10-ից 11-ը ՄԱԿ-ի Մանկական Հիմնադրամի հրավերով TRANSMONEE ծրագրի շրջանակում անդամ երկրների համակարգողների հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Գ.Գևորգյան, Լ.Պետրոսյան /

### **19.12.2014թ. նիստին**

#### ***Մասնակցում էին՝***

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Վ.Դավթյանը, Յու. Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը.

#### ***Հրավիրված էին՝***

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն.Մուշեղյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Սարտիրոսովան,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Վ. Օրոյանցը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ  
Լ. Խաչատրյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի  
առաջատար մասնագետ Ռ. Շաբոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի առաջին  
կարգի մասնագետ Ս. Շախգելոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ  
Հ. Հակոբյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի առաջատար  
մասնագետ Հ. Հովհաննիսյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի առաջատար  
մասնագետ Հ. Սարգսյանը:

***Նխատուվ լսվեցին հետևյալ հարցերը.***

1. «2015 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը հաստատելու  
մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Մուշեղյան/

**Որոշեցին՝**

Հաստատել «2015 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը»  
համաձայն հավելվածի:

/Նորմատիվ/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2004-2006  
թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված  
հետազոտության անվանազերծված տվյալների բազաները Ասիական զարգացման բանկի  
գլխավոր տնտեսագետի օգնական Ռանա Հասանին տրամադրելու թույլտվության մասին»  
հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

**Որոշեցին՝**

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության  
աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Ասիական  
զարգացման բանկի գլխավոր տնտեսագետի օգնական Ռանա Հասանին տրամադրել  
Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2004-2006  
թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված  
հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ գուտ  
զիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց  
չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

3. Հաղորդում՝ Ղազախստանի Հանրապետության Ալմաթի քաղաքում 2014 թվականի դեկտեմբերի 10-ից 12-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «ՄԱԿ-ի զարգացման հաշվի 9-րդ տրանշի» մեկնարկային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ս.Մնացականյան, Ա.Սաֆյան/

4. Հաղորդում՝ Ավստրիայի Հանրապետության Վիեննա քաղաքում 2014 թվականի նոյեմբերի 20-ից 21-ը Միավորված ազգերի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) կողմից կազմակերպված «Արդյունաբերության վիճակագրության հարցաթերթեր» ընդհանուր խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Հ. Հովհաննիսյան /

5. Հաղորդում՝ Ավստրիայի Հանրապետության Վիեննա քաղաքում 2014 թվականի նոյեմբերի 24-ից 28-ը Արժույթի միջազգային հիմնադրամի ինստիտուտի հրավերով, «Եռամսյակային ազգային հաշիվների ձեռնարկ» թեմայով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Լ. Պետրոսյան, Լ. Խաչատրյան/

6. Հաղորդում՝ Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաքում 2014 թվականի նոյեմբերի 24-ից 26-ը UNOCHA և MapAction համաշխարհային կազմակերպությունների կողմից կազմակերպված «Աշխարհագրական տեղեկատվական համակարգեր (GIS)» խորագրով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Վ.Օրոյանց /

7. Հաղորդում՝ Խորվաթիայի Հանրապետության Զագրեբ քաղաքում 2014 թվականի նոյեմբերի 25-ից 27-ը «Ինտգեյթ ծրագրի էներգետիկ վիճակագրության ցանց» թեմայով հանդիպում և «էներգետիկ վիճակագրության գործողությունների ծրագրի ձեռքբերումները և էներգետիկ վիճակագրության տվյալների որակի, հաշվեկշիռների և պլանավորման կատարելագործման անհրաժեշտությունը» թեմայով միջազգային կոնֆերանսին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Հ. Հակոբյան, Հ. Սարգսյան /

8. Հաղորդում՝ Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաքում 2014 թվականի դեկտեմբերի 3-ից 4-ը Եվրոպական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Արևելյան գործընկերության պլատֆորմ 4՝ 2014 թվականի Թուրինի տարածաշրջանային գործընթաց» թեմայով կոնֆերանսին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ն.Բաղդասարյան/

9. Հաղորդում՝ Լյուքսեմբուրգի Դքսության Լյուքսեմբուրգ քաղաքում 2014 թվականի նոյեմբերի 19-ից 21-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից կազմակերպված «SDMX-ը տվյալների և մեթատվյալների փոխանակման համար» խորագրով ուսումնական դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ռ.Շաբոյան, Ս.Շախգելոյան/